ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սպիտակի 1

N 4210-Ա « 15 » հոկտեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆԵՐՔԻՆ ՇԵՆԳԱՎԻԹ 11-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ.2 ՆՐԲԱՆՑՔԻՆ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.1-ԱԿԱՆ ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել ՀՀ վարչական դատարանի 16.10.2024թ. թիվ ՎԴ/10056/05/20 օրինական ուժի մեջ մտած վճիռը, որով պարտավորեցվել է Երևանի քաղաքապետարանին ճանաչել Ն.Շենգավիթ 11-րդ փողոցի հ.2 նրբանցքին հարող տարածքում գտնվող 0.1-ական հա մակերեսով հողամասերի նկատմամբ Աղավնի Մանուկյանի, Մարո Մանուկյանի և Տիգրան Մանուկյանի՝ սեփականության իրավունքով ձեռք բերելու նախապատվության իրավունքը:

ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի հողամասերը գտնվում են 8-րդ գոտում:

ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի հ.1517-Ն որոշման համաձայն՝ Ն.Շենգավիթ 11-րդ փողոցի հ.2 նրբանցքին հարող տարածքում գտնվող 0.1հա մակերեսով հողամասերն ընդգրկված են 01-011-0338-0023 ծածկագրի մեջ, որը ներառված է Երևանի ավագանու 26.06.2012թ. հ.470-Ն որոշման մեջ (տող՝ 53766):

Երևանի ավագանու 10.09.2024թ. հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի նոր գլխավոր հատակագծի համաձայն՝ նշված հողամասերը հանդիսանում են որպես բնակավայրերի բնակելի կառուցապատման հողեր:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, 72-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ վարչական դատարանի 16.10.2024թ. թիվ ՎԴ/10056/05/20 օրինական ուժի մեջ մտած վճիռը, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության Դ-49450-25 ու ճարտարապետության և քաղաքաշինության վարչության Ն/49942-25 եզրակացությունները.

1. Ն.Շենգավիթ 11-րդ փողոցի հ.2 նրբանցքին հարող տարածքում գտնվող 0.1-ական հա մակերեսով հողամասերի նկատմամբ ճանաչել Աղավնի Մանուկյանի, Մարո Մանուկյանի և Տիգրան Մանուկյանի՝ հողամասերը սեփականության իրավունքով ձեռք բերելու նախապատվության իրավունքը:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական, ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ